ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 հոկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

142
(2808)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Չնայած որ սեպտեմբերի 17-ին կայացած ընտրությունների արդյունքներով իշխանության թեկնածուն՝ Տիգրան Ավինյանը, ընդամենը 33% ձայն էր հավաքել եւ չէր ընտրվել քաղաքապետ, երեկ ավագանու ՔՊ եւ «Հանրապետություն» կուսակցությունների ձայներով Ավինյանն ընտրվեց քաղաքապետ: «Հանրային ձայն» կուսակցությունը եկավ եւ քվորում ապահովեց, բայց դեմ էր քվեարկել Տիգրան Ավինյանի թեկնածությանը: «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքապետն իր լիազորությունները ստանձնում է ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Երեւանի բնակիչներին տրված երդմամբ: Երեւանի ավագանու հաջորդ նիստը կկայանա նոյեմբերի 21-ին՝ ժամը 10:00-ին: Երեկվա նիստին նաեւ հանձնաժողովների նախագահներ եւ փոխնախագահներ նշանակվեցին: «Հանրապետություն»-ը ստացավ Ֆինանսավարկային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի եւ Մշակույթի, կրթության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնները, «Հանրային ձայն»-ը՝ միայն Քաղաքաշինության եւ հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը, մյուս բոլոր պաշտոնները ՔՊ-ինն են: Այսպիսով, բաց է մնում միայն Տիգրան Ավինյանի տեղակալների՝ փոխքաղաքապետերի հարցը, որը կքննարկվի արտահերթ նիստով կամ էլ նոյեմբերի 21-ի հերթական նիստին: Ըստ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ քաղաքապետի տեղակալներին ներկայացնում է քաղաքապետը, նշանակում կամ ընտրում է Երեւանի ավագանին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ փոխքաղաքապետի պաշտոնին հավակնում են քաղաքապետի ԺՊ Լեւոն Հովհաննիսյանը, որը Ավինյանի մտերիմն է քաղաքապետարանում, մյուս փոխքաղաքապետի հարցն էլ դեռ վաղուց է որոշված. այս պաշտոնում կնշանակվի Արմեն Փամբուխչյանը, որը քաղաքապետարանում Փաշինյանի «աչքն ու ականջն է»: Ի դեպ, Փամբուխչյանը «գործազուրկ» է դեռ հունիսի 30-ից՝ ԱԻ նախարարության լուծարումից հետո: Փաշինյանն էլ երկար փնտրտուքներից հետո նրա համար դեռ վաղուց պահել է փոխքաղաքապետի պաշտոնը: Փոխքաղաքապետերից մեկն էլ պետք է բաժին հասնի «Հանրապետություն» կուսակցությանը: Այս պահին թեժ քննարկումներ են գնում կուսակցության ներսում Արտակ Զեյնալյանի եւ Անի Խաչատրյանի թեկնածությունների շուրջ: ՔՊ-ն այդ պաշտոնը տալու է Արամ Սարգսյանի ղեկավարած ուժին, իսկ թե ում կառաջադրեն՝ Զեյնալյանին, թե Անի Խաչատրյանին, «Հանրապետություն»-ը դեռ որոշում չունի:

Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված հայերի հոսքն ավարտված է: Ավելի քան 100 հազար տեղահանվածներից մոտ 54 հազարը շարունակում են գտնվել պետության կողմից տրամադրված կացարաններում: Այս մասին, «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան, տեղեկացնում է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը: Ինչպե՞ս են տեղի ունենալու Արցախից բռնի տեղափոխված մեր հայրենակիցներին նյութական փոխհատուցումները: Մասնավորապես, շատ-շատերը ունեցել են Արցախում ընտանի կենդանիներ (կով, խոզ եւ այլն), որոնք եղել են իրենց ապրուստի միակ միջոցը, եւ այսօր Հայաստանում փաստացի ոչինչ չունեն: Ի՞նչ է առաջարկում կառավարությունը. «ՀՀ կառավարությունը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների կարիքները հասցեագրելու նպատակով արդեն իսկ նախաձեռնել է աջակցության ծրագրեր՝ օրենքով սահմանված կարգով, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Մասնավորապես, արդեն իսկ հաստատվել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հրատապ կարիքները հոգալու նպատակով պետության կողմից յուրաքանչյուրին 100.000 դրամ միանվագ աջակցություն տրամադրելու վերաբերյալ ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվող փոխանցումների իրականացումն արդեն մեկնարկել է»: Փոխվարչապետը տեղեկացնում է նաեւ, որ առաջիկայում նախատեսվում է բնակության ծախսերը հոգալու համար մեկ անձի հաշվով հատկացնել 40000 եւ կոմունալ ծախսերի համար հավելյալ 10000 դրամ: Ի վերջո, անդրադառնալով մեր բուն հարցին՝ Խաչատրյանը տեղեկացնում է, որ կարիքների գնահատման գործընթացի ավարտից հետո, ըստ անհրաժեշտության, նաեւ աջակցության նոր ծրագրեր կդիտարկեն գյուղատնտեսության ոլորտում գործունեության համար: Թե «ըստ անհրաժեշտության» արտահայտության տակ ինչ կա թաքնված, ու ինչպես դա կորոշվի, անհայտ է: Նույն անորոշ պատասխանը տրվում է՝ կապված բնակարանային ապահովման հետ: Արդյոք արցախահայությանը հետագայում հատկացվելո՞ւ են բնակարաններ, տներ, ինչպես հայտնի ժամանակներում էր, թե՞, ինչպես ՀՀ մնացած քաղաքացիները, նրանք եւս իրենց արդար քրտինքով մեկ անգամ էլ պետք է «տուն դնեն»: Փոխվարչապետը վաղվա ծրագրերից խոսել խուսափում է՝ կարծես ակնարկելով՝ կապրենք, կտեսնենք. «Մինչ այս Կառավարության գործողություններն ուղղված են եղել բռնի տեղահանվածների հրատապ եւ միջնաժամկետ կարիքներին արագ արձագանքմանը՝ զուգահեռաբար դիտարկելով նաեւ հնարավոր երկարաժամկետ անելիքների վերաբերյալ հիմնական մոտեցումները: Երկարաժամկետ աջակցության ծրագրերի հիմնական ուղղությունների վերաբերյալ որոշումները կկայացվեն եւ հանրությանը կներկայացվեն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համապարփակ կարիքների գնահատումն ավարտելուց հետո»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի թեկնածու են պատրաստվում առաջադրել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախկին նախագահ Մանվել Բաղալյանին: Նախորդ անգամ՝ սեպտեմբերի 12-ին, իշխող մեծամասնությունը տապալեց ընդդիմության թեկնածուի ընտրությունը. 107 պատգամավորից քվեարկությանը մասնակցել էին ընդդիմադիր 33 պատգամավորներ, իսկ իշխող ֆրակցիայի պատգամավորներն առհասարակ չէին եկել քվեարկության, ինչի պատճառով Անահիտ Սարգսյանի թեկնածությունը խորհրդարանը չէր հաստատել: Մեր տեղեկություններով՝ ընդդիմադիր խմբակցությունները որոշել են կրկին փորձել ու այդ պաշտոնում նոր թեկնածու առաջադրել: Թեկնածուի առաջադրման ժամկետը մինչեւ ամսի 12-ն է, ընդդիմադիրները վաղը կներկայացնեն նրա թեկնածությունը ԱԺ, իսկ ԱԺ առաջիկա նիստին արդեն կքննարկվի Մանվել Բաղալյանի թեկնածության հարցը: Թե ինչու կանգ առան հենց Մանվել Բաղալյանի թեկնածության վրա՝ հաշվի առնելով, որ ՔՊ-ն նախորդ անգամ տապալեց ընդդիմության թեկնածուի ընտրությունը, եւ թե հիմա ինչ ակնկալիքով են նոր թեկնածու առաջադրում, «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը պատասխանեց. «Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված մեր լիազորությունն է ներկայացնել թեկնածու, մենք ներկայացնում ենք արժանապատիվ, իսկ թե ինչ կանի իշխանությունը, չեմ կարող ասել: Մյուս բոլոր հարցերի պատասխաններն արդեն ԱԺ նիստին կհնչեն»:



Երեւանի նախկին քաղաքապետ, ՀՀ պաշտպանության փոխնախարար Հրաչյա Սարգսյանը պարտվել է Առաջին ատյանի դատարանում ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանի դեմ ներկայացրած գործով: Հայտնել էինք, որ 2022 թվականի սեպտեմբերի 1-ին Հրաչյա Սարգսյանը դիմել էր Վարչական դատարան՝ ԱԺ պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: ՀՀ օրենսգրքի 180.1-ի հոդվածի 1-ին մասով վարչական իրավախախտում է համարվում առանց համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով իրազեկելու կամ իրազեկման պայմանների խախտմամբ հավաք անցկացնելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում հավաքի կազմակերպչի կամ ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով: Արդյունքում Վարչական դատարանը, շուրջ 1 տարի քննելով գործը, որոշել է մերժել նախկին քաղաքապետ, ներկայիս փոխնախարար Հրաչյա Սարգսյանի հայցը: Նկատենք, որ Երեւանի քաղաքապետարանում լուրջ են տրամադրված եւ որոշումը բողոքարկել են ՀՀ վերաքննիչ դատարանում, որտեղ նիստերը շարունակվում են: Տեսնենք, թե ինչ կստացվի այս դեպքում:

ԶՐՈՒՅՑ

ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐՑՐԵԼ Է ՄԱՆԴԱՏԸ. ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ

Չնայած որ սեպտեմբերի 17-ին կայացած ընտրությունների արդյունքներով իշխանության թեկնածուն՝ Տիգրան Ավինյանը, ընդամենը 33% ձայն էր հավաքել եւ չէր ընտրվել քաղաքացիական, երեկ, ավագանու ՔՊ եւ «Հանրապետություն» կուսակցությունների ձայներով, Ավինյանն ընտրվեց քաղաքացիական:

Հիշեցնենք, որ «Հանրային ձայն» կուսակցությունը եկավ եւ քվորում ապահովվեց, բայց դեմ էր քվեարկել Տիգրան Ավինյանի թեկնածությանը: Հայկ Մարությանին առաջադրած «Ազգային առաջընթաց» կուսակցությունը եւ Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստան» դաշինքը բոյկոտել էին նիստը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Ազգային առաջընթաց» կուսակցության ղեկավար Հայկ Գրիգորյանը հայտարարեց, որ գնալու եւ մասնակցելու են ավագանու նիստերին, իսկ Հայկ Մարությանն այս պահի դրությամբ վերցրել է մանդատը:

-Պարոն Գրիգորյան, փաստացի ձեր բոյկոտը որեւէ արդյունք չտվեց, ավագանին Տիգրան Ավինյանին ընտրեց քաղաքապետ անգամ ձեր բացակայության պայմաններում: Չե՞ք կարծում, որ ձեր բոյկոտն անիմաստ էր, եւ պետք էր այլ քայլեր մտածել իշխանության վերարտադրումը կանխելու համար:

-Վերարտադրումը կանխելու համար բանակցություններ եղան մյուս ուժերի հետ, բայց դա չստացվեց, հաջորդ տարբերակը բոյկոտն էր: Եթե բոլորը միանային բոյկոտին, նաեւ «Հանրային ձայնը», կլինեին նոր ընտրություններ, բայց դա տեղի չունեցավ: Սա, սակայն, չի նշանակում, թե բոկոտը սխալ էր: Երեք ուժերի մեջ չեղավ համաձայնություն, մեզ մնում էր բոյկոտը միայն:

-Պարոն Գրիգորյան, նրանք էլ ասում են, որ Հայկ Մարությանը տապալեց բանակցությունները, եւ նրա պատճառով է, որ ընդդիմադիր ուժերի մեջ համաձայնություն այդպես էլ ձեռք չբերվեց:

-Դա այդքան էլ այդպես չի. սա մեկնաբանության կարիք չունի: Դուք տեսել եք, թե իրենք ինչ են առաջարկել, մենք ինչ ենք պատասխանել: Առնվազն 4 կամ 5 անգամ հանրային ձեւով դա արվել է: Հիմա էլ հետ գնալ պետք չի, փաստացի չի հաջողվել համաձայնության գալ, ու եղել է այս վիճակը:

-Ավագանու հաջորդ նիստը նոյեմբերին է նշանակված, գնալո՞ ք, մասնակցելու՞ ք ավագանու նիստերին:

-Իհարկե, գալու ենք, մասնակցելու ենք նիստերին:

-Հայկ Մարությանն ի՞նչ որոշում ունի, վերցնելո՞ ք է մանդատը, աշխատելո՞ ք է Տիգրան Ավինյանի հետ:

-Այս պահի դրությամբ վերցրել է մանդատն արդեն, ավագանու այսօրվա նիստին հրապարակվեց ավագանու անդամների անունները, այդ թվում՝ նրա: Այս պահի դրությամբ, իսկ թե հետո ինչ կլինի, որոշում կփոխի, թե ոչ, ես չեմ կարող ասել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԵԽԻԱՅՈՒՄ

Չեխիայի Հանրապետության Սենատի առաջին փոխնախագահ Յիրժի Դրահոշի հրավերով՝ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 8-10-ն աշխատանքային այցով գտնվում էր Պրահայում:

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ ԱԺ-ից հայտնում են, որ հոկտեմբերի 9-ին Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակությանն ընդունել է Չեխիայի Հանրապետության խորհրդարանի Սենատի նախագահ Միլոշ Վիստրչիլը:

Հակոբ Արշակյանը ներկայացրել է սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից ռազմական հարձակման հետեւանքով ստեղծված իրավիճակը, որը հանգեցրել է ԼՂ հայ բնակչության էթնիկ զտման:

Անդրադարձ է կատարվել Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ տարվող ագրեսիվ քաղաքականությանը, որի հետեւանքով օկուպացվել է Հայաստանի շուրջ 150 քառակուսի կմ տարածք:

«Խաղաղության օրակարգը մեր տարածաշրջանում այլընտրանք չունի. մենք որդեգրել ենք խաղաղության եւ ժողովրդավարության ուղին, հաստատակամ ենք մեր ընտրության մեջ եւ ակնկալում ենք միջազգային գործընկերների աջակցությունը»,- նշել է ՀՀ ԱԺ նախագահի տեղակալը: Նշենք, որ անդրադարձ է եղել նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին պատշաճ աջակցության ցուցաբերման եւ այդ ուղղությամբ միջազգային գործընկերների հետ աշխատանքներին: Հակոբ Արշակյանը շնորհակալություն է հայտնել Չեխիայի կառավարությանը ցուցաբերած հումանիտար օգնության համար:

Չեխիայի Հանրապետության Սենատի նախագահ Միլոշ Վիստրչիլը ողջունել է օրերս Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձեւը, որը դատապարտում է Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի զինված ուժերի գործողությունները: Սենատի նախագահն աջակցություն է հայտնել Հայաստանի տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանը եւ ժողովրդավարությանը:

Հավելենք, որ պատվիրակության կազմում ընդգրկված են ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը եւ ՀՀ ԱԺ Հայաստան-Չեխիա բարեկամական խմբի անդամ Հասմիկ Հակոբյանը:

ԱԶԱՏԵԼ ԵՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

Դատական համակարգում խոսակցություններ կան, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Միեր Արղամանյանը նեղացած է քաղաքական իշխանություններից, քանի որ իր դատավոր որդուն՝ Դավիթ Արղամանյանին, ազատեցին դատական համակարգից, ուստի նա Ռոբերտ Քոչարյանի որդու՝ Լեւոն Քոչարյանի մասով անկանխատեսելի որոշում կկայացնի: Մասնավորապես, ըստ դատական համակարգում տարածված լուրերի՝ չի բացառվում, որ նա բեկանի Առաջին ատյանի դատարանի որոշումը եւ տնային կալանքի տանի կամ էլ գրավ կիրառի Լեւոն Քոչարյանի նկատմամբ: Նշենք, որ Հանրապետության հրապարակում տեղի ունեցած բողոքի ակցիայի ժամանակ Լեւոն Քոչարյանին, բռնություն կիրառելով, բերման էին ենթարկել, ապա նրան տեղափոխել էին հիվանդանոց, որտեղից էլ՝ ձերբակալել: Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաեւի հաղորդմամբ՝ ոստիկանները հաղորդում են ներկայացրել, որ Լ. Քոչարյանը 4 կարմիրբերետավորի է ծեծել: Լեւոն Քոչարյանը սեպտեմբերի 25-ին 1 ամսով կալանավորվել է, եւ նրա պաշտպանները դիմել էին ՀՀ վերաքննիչ դատարան, որտեղ գործը մակագրվել է իշխանությունների սրտով որոշում կայացրած դատավոր Միեր Արղամանյանին: Նշենք, որ Արղամանյանի որդին՝ Դավիթ Արղամանյանը, 2018 թվականի նոյեմբերի 24-ին, երբ Նիկոլ Փաշինյանը նախընտրական երթ էր անում Երեւանում, ոչ ավել, ոչ պակաս, հայտնի «դըմփ դըմփ հու»-ի թմբուկն էր զարկում: Դրանից հետո նշանակվեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի օգնական: 2021 թվականին էլ նշանակեցին բոլորին հայտնի՝ կալանք տվող դատարանի դատավոր, ինչից հետո վերոնշյալ դատարանը լուծարվեց, իսկ դատավորները հեռացվեցին համակարգից:

ԲՅՈՒՋԵԻ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման համակարգում կարող եք տեսնել Հայաստանի 2023 թվականի բյուջեի հատկացումները: Ըստ ինտերակտիվ բյուջեի պատկերի՝ տարեկան ոլորտային հատկացված բյուջեն կազմում է 2 մլդ 556 մլն 572 հազար 569 դրամ: Ըստ գրաֆիկական պատկերների՝ կարող ենք տեսնել, որ ամենաշատ հատկացումներ ստացած ոլորտը սոցիալական պաշտպանության ոլորտն է, երկրորդ տեղում պաշտպանությունն է՝ 520 մլն 520 հազար դրամ: Երրորդ տեղում 513 մլն 787 հազար դրամ ընդհանուր բնույթի ծառայություններին է տրամադրված, որի մեջ մտնում են օրենսդիր եւ գործադիր մարմինները, պետական կառավարումը, ֆինանսական եւ հարկաբյուջետային հարաբերությունները, արտաքին հարաբերությունները, Կառավարության տարբեր մակարդակների միջեւ իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներին տրամադրվող ֆինանսական միջոցները նաեւ նմանատիպ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական եւ նախագծային աշխատանքների համար տրամադրված հատկացումները: Չորրորդ տեղում, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունների, տնտեսական հարաբերությունների համար հատկացումներն են՝239 մլն դրամ, եւ միայն հինգերորդ տեղում կրթության ոլորտի հատկացումներն են՝211 մլն դրամ: Համեմատության համար կարող ենք ասել, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության բյուջեն 2024 թվականի համար նախատեսել է 2,340 միլիարդ լարի՝ 348 միլիոն դրամ: Ըստ հրապարակված մյուս տվյալների՝ հատկացումների քանակով առաջին տեղում կրթության եւ գիտության ոլորտն է: Հայաստանում կրթության ոլորտն այնքան է աչքաթող արվել, որ այս տարի ԿԳՄՍ ձախողված մրցույթներից հետո երեխաներին չհանձնվեցին իբրեւ տպագրվող ռուսերենի դասագրքերը. դրանք այս տարի չեն էլ լինելու: Կրթության ոլորտը միայն որպես ֆինանսական միջոցներ ստանալու աղբյուր օգտագործելու պատճառով էլ այսօր պատմություն ունեցող համալսարանների շենքերը փորձում են վաճառել: Գրեթե ոչ մի էական բարեփոխումներ չեն արվել այս ոլորտում, որի հետեւանքով այսօր ունենք կրթություն չգնահատող իշխանություն: Խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքով աշխատանքի են ընդունվում դասախոսներ եւ ուսուցիչներ, որոնք այդ ոլորտի համապատասխան կրթություն չունեն: Հայաստանում չի գնահատվում գիտությունը, ինչի պատճառով Հայաստանում նվազել է գիտական աշխատությունների քանակը, պակասել է նաեւ գիտական աստիճան ունեցողների թիվը եւ աստիճան ստանալ ցանկացողների թիվը: Դպրոցներում ուսուցիչներին ատեստավորում են՝ խոստումով, որ աշխատավարձի տոկոսային բարձրացում կլինի, սակայն այդպես էլ ոչինչ չի լինում: Ուսուցիչներին գովում ու խրախուսում են միայն խոսքերով, սակայն նրանք աշխատանքին համապատասխան չեն վարձատրվում: Չինաստանում ուսուցիչները ստանում են ամենաբարձր աշխատավարձը, եւ տեսաբանները փաստում են, որ այդ որոշումից հետո բարձրացել է ուսանողների եւ աշակերտների ուսման որակը եւ ուսուցիչների աշխատանքի արդյունավետությունը: Նրանք կարծում են, որ այս որոշումը երկրի տնտեսության զարգացմանը եւս նպաստել է: Հայաստանում ուսուցիչը ստանում է ամենացածր աշխատավարձից մի քայլ բարձր աշխատավարձ, իսկ ՀՀ կառավարությունը բարձրացնում է իր սրտի որոշումներ կայացնող դատավորների աշխատավարձը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Քաղաքական գործիչ Սուրեն Պետրոսյանը, որը սեպտեմբերին կայացած ավագանու ընտրություններին հանդիսանում էր «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության քաղաքապետի թեկնածուն, երեկ հրավիրել էր մամուլի ասուլիս՝ «Արցախի Հանրապետության լուծարումը հակասահմանադրական է, Արցախի նկատմամբ մեր իրավունքների ամրագրումը՝ որպես քաղաքական առաջնային օրակարգ» թեմայով:

Սուրեն Պետրոսյանն ասուլիսի ժամանակ նշեց, որ այս նախաձեռությունը կապ չունի իր կուսակցական գործունեության հետ: Սուրեն Պետրոսյանի այս նախաձեռնությանը սատարում էր նաեւ ԵՊՀ Իրավիագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ Վարդան Այվազյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Արցախի հայկականության երաշխավորման իրավաքաղաքական հիմքերը եւ Արցախի նկատմամբ մեր իրավունքների ամրագրման ուղղությամբ հետագա քայլերը:

Ըստ Պետրոսյանի՝ քայլերից գլխավորն Արցախի սահմանադրական կարգի վերականգնման ուղղված քննարկումն է, պետք է նախաձեռնել եւ վերականգնել Արցախի լուծարված խորհրդարանը: Հարցին, թե այս թեմայով որեւէ քննարկում ունեցել են արդյոք Արցախի խորհրդարանի պատգամավորների հետ, Պետրոսյանը պատասխանեց. «Մենք նպատակահարմար չենք գտել, քանի որ վստահ ենք, որ նրանցից ոչ ոք չի կարող անհամաձայնություն տալ: Հետագայում նախատեսում են ստեղծել տեղեկատվական շտաբ, որը համախմբանը կօգնի: Քանի որ իշխանությունը Արցախի հարցում ձեռքերը լվացել է, այդ պատճառով նախաձեռնել ենք այս գործողությունը»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԶԱԽԱՐՈՎԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան Իսրայելում բնակություն հաստատած ռուսներին անվանել է «վախեցած հայրենասերներ»:

«Ռուսաստանում հատուկ ռազմական գործողության մեկնարկից հետո Իսրայել մեկնած ռուսները «վախեցած հայրենասերներ» են: Աշխարհը հետեւում է լիբերալ սկզբունքայնության ճկունությանը: «Վախեցած հայրենասերները» իրենց կոչումը հաստատեցին՝ նորից վախենալով եւ լքելով իրենց նոր հայրենիքները: Աշխարհը լայն բաց աչքերով է դիտում ազատական սկզբունքների ճկունությունը»,- գրել է Մարիա Զախարովան տելեգրամյան իր ալիքում:

Վերջում Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը հավելել է, որ նախկինում հյուսիսարեւելյան ռազմական շրջանի եւ մոբիլիզացիայի պատճառով Իսրայել փախած ռուսները խոսում էին պաղեստինյան «ՀԱՄԱՍ» խմբավորման հարձակումների մասին:

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ԻՆՉ ՊԱՇՏՈՆ ԿՈՒՆԵՆԱ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»-Ը

«Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունները որոշել են կնքել հուշագիր՝ հաշվի առնելով Երեւանում սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքները: Այս մասին երեկ՝ հոկտեմբերի 10-ին՝ մամուլի ասուլիսին, հայտարարեց Երեւանի քաղաքապետ ընտրված Տիգրան Ավինյանը:

«Երեւանի ավագանու ՔՊ եւ «Հանրապետություն» խմբակցությունները, ՀՀ ինքնիշխանությունը, ժողովրդավարությունը եւ անվտանգությունը համարելով գերագույն արժեքներ եւ նպատակ ունենալով Երեւան քաղաքը դարձնել եվրոպական մոդելի, մարդկանց համար հարմար եւ հասանելի քաղաք, կյանքի կոչել «Հանրապետություն» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների նախընտրական ծրագրերը, որոշեցին սկսել համագործակցություն՝ ի նպաստ Երեւանի զարգացման եւ երեւանցիների բարօրության»,- ասաց նա:

Ավինյանը նշեց, որ Երեւանի կառավարումն իրականացնելու են միասին՝ պատասխանատվությունը կիսելով:

Այս խոսքերից հետո Տիգրան Ավինյանը եւ Երեւանի ավագանիում «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Արտակ Զեյնալյանը ստորագրեցին հուշագիրը:

«Հանրապետություն» կուսակցության հետ ստորագրված այս հուշագիրը նշանակում է, որ Երեւան քաղաքի կառավարումը ՔՊ եւ «Հանրապետություն» խմբակցությունները իրականացնելու են միասին, ինչը նշանակում է, որ գործադիրում նշանակումները եւս իրականացվելու են միասին եւ փոխհամաձայնեցված: Կառավարումն իրականացնելու են այս երկու խմբակցությունները միասին: Այս մասին հայտարարեց Տիգրան Ավինյանը՝ անդրադառնալով հարցին, թե արդյոք դա նշանակում է, որ պաշտոններ են տրվելու «Հանրապետություն» կուսակցությանը, եւ արդյոք սա էր այն գինը, որը պետք է վճարեին համագործակցության համար:

Ճշտող հարցին, թե արդյոք «Հանրապետություն» կուսակցությանը բաժին է հասնելու փոխքաղաքապետի պաշտոնը, Ավինյանն ասաց. «Բոլոր այդ մանրամասները ամեն նիստի հետ հայտնի կդառնան: Մեր ներքին քննարկումների արդյունքում կներկայացնենք բոլոր պաշտոնյաներին, որոնք պետք է ստանձնեն պատասխանատվություն գործադիրում»:

Իր հերթին Երեւանի ավագանիում «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Արտակ Զեյնալյանն ասաց, որ հուշագիրը ստորագրելիս առաջնորդվել են Երեւանի, Հայաստանի շահով, Սահմանադրությամբ, ժողովրդական, իրավական պետության հիմնարար սկզբունքներով:

«Գուցե իդեալական տարբերակը չէ, սակայն իշխանություն ունենալն ավելի լավ սահմանադրական վիճակ է, քան իշխանություն չունենալը»,-ասաց նա: Ինչ վերաբերում է հարցին, թե պաշտոններն էին արդյոք ՔՊ-ին աջակցելու գինը, Զեյնալյանն ասաց՝ պաշտոնը կարկանդակ չէ, ծառայություն է, ծանր աշխատանք, պատասխանատվության ստանձնում: «Եվս մեկ անգամ կրկնեմ՝ դա շնորհ, պարգեւ չէ՝ որեւէ մեկին տրված: Դա պատասխանատվության ստանձնում է: «Հանրապետություն» կուսակցությունը որոշեց ստանձնել այդ պատասխանատվությունը»,-ասաց Զեյնալյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Երեւանի քաղաքապետ ընտրվեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Տիգրան Ավինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ավագանու հոկտեմբերի 10-ի նիստին քվեարկությանը մասնակցել էր ավագանու 37 անդամ, թեկնածուին կողմ է քվեարկել 32 անդամ, դեմ՝ 5:

Տիգրան Ավինյանը քաղաքապետի միակ թեկնածուն էր:

Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստին մասնակցում էին «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն» եւ «Հանրային ձայն» խմբակցությունները:

Երեւանի ավագանու ընտրություններն անցկացվել էին սեպտեմբերի 17-ին: Ընտրություններում մասնակից 14 քաղաքական ուժերից անցողիկ շեմը հաղթահարել է 5-ը: Անցողիկ շեմը հաղթահարած ուժերն են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Ազգային առաջընթաց» կուսակցությունը, «Մայր Հայաստան» դաշինքը, «Հանրային ձայն» կուսակցությունը եւ «Հանրապետություն» կուսակցությունը: «Ազգային առաջընթաց» կուսակցությունը եւ «Մայր Հայաստան» դաշինքը բոյկոտել են Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը:

ԺԱՄԱՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆրանսիայի քաղաքացիական անվտանգության 56 զինվորական, 2 Dash ինքնաթիռ, 1 կառավարման շարժական կայան, 8 տոննա տեխնիկա եւ 2 փրկարար շուն ժամանել են Հայաստան: Հոկտեմբերի 10-ի երեկոյան դեսպան Օլիվիե Դըկոտինյին Երեւանում դիմավորել է ֆրանսիական թիմերին:

Նրանք Հայաստանի եւ ԵՄ-ի փրկարարների հետ կմասնակցեն «HOPE 2023» վարժանքին:

Այդ մասին հայտնում են Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունից:

Հայաստանում են նաեւ Կիպրոսի եւ Մոնտենեգրոյի որոնողափրկարարական թիմերը:

ՀԱՐՎԱԾՆԵՐ՝ ԳԱԶԱՅԻՆ

Իսրայելի պաշտպանության բանակը (IDF) հայտարարել է նախորդ գիշեր Գազայի հատվածում «ՀԱՄԱՍ»-ի եւ «Իսլամական ջիհադի» ավելի քան 200 օբյեկտների ուղղությամբ հասցված ավիահարվածների մասին:

Նշվում է, որ հարվածներ են հասցվել Ռիմալի եւ Խան Յունիսի օբյեկտներին: Զինվորականները պնդում են, որ այդ երկու շրջաններն օգտագործվում են որպես «ահաբեկչական հանգույցներ», զգալի թվով ահաբեկչություններ հենց այնտեղից էին սկսվում:

Ինչպես հաղորդում է The Times of Israel թերթը, ծանր տրանսպորտային ինքնաթիռները թռչել են եվրոպական տարբեր երկրներ՝ Իսրայել տեղափոխելու այն զինվորներին, որոնք չեն կարողացել ինքնուրույն վերադառնալ: Գործողությունն իրականացվել է Արտաքին գործերի նախարարության հետ համաձայնությամբ:

Ներքին տեղահանվածների թիվը Գազայի հատվածում աճել է մինչեւ 187 հազար, անօթեւան մնացած առնվազն 137 հազար մարդու տեղափոխել են դպրոցական շենքեր ժամանակավոր ապրելու նպատակով, սակայն 50 հազար պաղեստինցի դեռ անօթեւան են: Բուն Գազայի ապաստարանները գերբնակեցված են, իսկ խմելու ջրի մատակարարումը սահմանափակ է:

Վերջին տվյալներով՝ Իսրայելում զոհերի թիվը գերազանցել է 800-ը, ավելի քան 2200 վիրավոր կա: Իսկ Գազայի հատվածում պաղեստինցիների շրջանում կա 510 զոհ, վիրավորները 2751-ն են:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

Ոստիկանության Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Մ. Ե.-ն, օպերլիազոր Վ.Պ.-ն եւ վկա Մ. Ե.-ն ծեծի են ենթարկել ձերբակալված անչափահասի պաշտպաններին: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից՝ նշելով, որ դատախազը 2023 թվականի հոկտեմբերի 9-ին հաստատել է Ոստիկանության Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի, օպերլիազորի եւ վկայի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Դատախազությունից հիշեցնում են, որ 2023 թվականի փետրվարի 9-ին Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ձերբակալված անչափահաս Ռ.Տ.-ի, ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազոր Վ.Պ.-Ի եւ տվյալ քրեական վարույթով վկա Մ.Ե.-ի մասնակցությամբ քննչական գործողության կատարման ընթացքում Ռ.Տ-ի պաշտպան Մ.Ա.-ի վերաբերյալ հնչել են հեգնական արտահայտություններ:

Քննչական գործողության ավարտից հետո պաշտպան Մ.Ա.-ն վկա Մ.Ե.-ին քննիչի աշխատասենյակից դուրս է հրավիրել եւ միջանցքում պարզաբանում պահանջել: Վկա Մ.Ե.-ն բաժնի միջանցքում գտնվող՝ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Ս.Ե.-ի, օպերլիազոր Վ.Պ.-ի եւ քննությամբ չպարզված այլ ծառայողների ներկայությամբ հերքել է ինչպես իր, այնպես էլ ոստիկանության մյուս աշխատակիցների կողմից Մ.Ա.-ի վերաբերյալ հեգնական արտահայտություն հնչեցնելու հանգամանքը: Դրան ի պատասխան՝ Մ.Ա.-ն սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել այն անձանց հասցեին, որոնք իր վերաբերյալ նման արտահայտություն են արել: Այդ կապակցությամբ Մ.Ա.-ի եւ միջադեպին ներկա ՆԳՆ ոստիկանության ծառայողների միջեւ վիճաբանություն է առաջացել:

Վիճաբանության ընթացքում վկա Մ.Ե.-ն, Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Ս.Ե.-ն եւ քննությամբ չպարզված ՆԳՆ ոստիկանության այլ աշխատակիցներ խմբի կազմում ձեռքերով եւ ոտքերով հարվածներ են հասցրել պաշտպան Մ.Ա.-ի գլխի եւ մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

Միջադեպին ներկա ձերբակալված անչափահաս Ռ.Տ.-ի մյուս պաշտպան Է.Ա.-ն միջամտել է ծեծկռտուքին, սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրել միջադեպին ներկա ոստիկանության աշխատակիցների հասցեին: Դրանից հետո վկա Մ.Ե.-ն օպերլիազոր Վ.Պ.-ի եւ քննությամբ չպարզված ՆԳՆ ոստիկանության այլ աշխատակիցների հետ միասին խմբի կազմում, պատասխան հայհոյանքներ հնչեցնելով, հարվածներ են հասցրել պաշտպան Է.Ա.-ի դեմքի եւ մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

2023 թվականի օգոստոսի 8-ին եւ օգոստոսի 9-ին դատախազը հանրային քրեական հետապնդումներ էր հարուցել քրեական վարույթով վկա Մ.Ե.-ի (2 դրվագ), Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Ս.Ե.-ի եւ օպերլիազոր Վ.Պ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործությունը):

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՌՈՇԱԳՐԱՎ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

«Արցախբանկ» Մարտունու մասնաճյուղից 60 միլիոն դրամ եւ 100 պարկ գրավադրված ոսկյա զարդեր գողանալու գործով նախաձեռնվել է քրեական վարույթ: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկանում է ՔԿ խոսնակ Գոռ Աբրահամյանի ֆեյսբուքյան էջից:

2023թ. հոկտեմբերի 6-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում հաղորդում է ստացվել այն մասին, որ «Արցախբանկ» ՓԲԸ գլխամաս է ներկայացել Լեռնային Ղարաբաղի Մարտունի քաղաքի «Արցախբանկ» ՓԲԸ կառավարիչը եւ հայտնել, որ սեպտեմբերի 22-ին, տեղեկանալով Արցախի Հանրապետության ժողովրդի տարհանման մասին, «Արցախբանկ» ՓԲԸ-ի Մարտունու մասնաճյուղի ամբողջ գումարը՝ մոտ 60.000.000 ՀՀ դրամը, եւ մոտ 100 պարկ գրավադրված ոսկյա զարդերը վերցրել եւ դրել է իր անձնական օգտագործման ավտոմեքենայի մեջ եւ գնացել տուն հաջորդ օրը ՀՀ մեկնելու նպատակով: Հաջորդ օրը՝ առավոտյան, նկատել է, որ անհայտ անձը կոտրել է ավտոմեքենայի ապակին եւ սրահից գողացել է նշված գումարը եւ ոսկյա զարդերը:

Հաղորդման հիման վրա հոկտեմբերի 9-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 254-րդ 3-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով (առանձնապես խոշոր չափերով գողությունը), նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվում է նախաքննություն՝ հաղորդմամբ ներկայացված տեղեկությունները քրեական վարույթի շրջանակներում ստուգելու եւ հանգամանքները պարզելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՒՄ Է

Դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Վայոց ձորի մարզի Սերս համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից:

«Տ.Մ.-ն, 2006 թվականի նոյեմբերի 9-ից մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Վայոց ձորի մարզի Սերս համայնքի ղեկավարի պաշտոնը, 2010 թվականի հուլիսի 6-ին գյուղատնտեսական նշանակության արոտավայր հանդիսացող՝ 0,2 հա մակերեսով հողատարածքը տարեկան 3.000 դրամ վարձավճարով, 25 տարի ժամկետով տրամադրել է Արարատ քաղաքի բնակիչ Թ.Հ.-ին: Թ.Հ.-ն ալեհավաք կայան տեղադրելու նպատակով ենթավարձակալության պայմանագիր է կնքել «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ կապի օպերատորի հետ եւ մինչեւ Սերս համայնքի ղեկավար Տ.Մ.-ի պաշտոնավարման ավարտը կապի օպերատորից ստացել է 3 մլն 840 հազար դրամ շահույթ, որից Սերս համայնքի բյուջե վճարվել է ընդամենը 18 հազար դրամը: Դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել համայնքի նախկին ղեկավար Տ.Մ.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ):

ԿԱՐԵՎՈՐ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՉԿԱ

Մշակույթի նախարար Հասմիկ Ստեփանի Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկեցավ, որ նա, 2012-2016 թվականներին զբաղեցնելով ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնը եւ հանդիսանալով պետության անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, իր ծառայողական լիազորություններն ի վնաս է օգտագործել պետական շահերի:

Նա օժանդակել է «Սոխոսենթր» ՍՊ ընկերության հիմնադիրներ Գոռ Դավթյանի եւ Հմայակ Ավագյանի, Հայկ Խալաֆյանի, Արման Պետրոսյանի, ինչպես նաեւ Նիկոլայ եւ Մարտունի Կոստանդյանների մասնակցությամբ եւ Արմեն Սմբատյանի կազմակերպած ու ղեկավարած հանցավոր խմբի կողմից պետական սեփականություն հանդիսացող «Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱ կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երեւանի Կողբացի 36 հասցեում գտնվող հողամասից առանձնացված 300 քառակուսի մետր մակերեսով հողամասն առանց ՀՀ կառավարության 26.07.2012թ. N 1052-Ա որոշմամբ սահմանված պարտականությունների կատարման խարդախությամբ հափշտակելուն, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունից հափշտակվել է առանձնապես խոշոր չափերի՝ 166.103.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով հողամասը:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ ԶԻՆՎՈՐԻ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող Նարեկ Նազարյանի մահվան գործով: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ զինվորի մահվան գործով ձերբակալվել է նույն զորամասի մեկ այլ զինծառայող: Իրավապահ համակարգից մեզ հասած լուրերի համաձայն՝ զինծառայողն է կրակել Նարեկ Նազարյանի վրա եւ իրավապահներին ցուցմունք է տվել եւ հայտնել, որ պատահաբար է կրակել: Իսկ թե պատահաբար է եղել, թե դիտավորյալ, կպարզի քննությունը:

Նշենք, որ հոկտեմբերի 9-ին կյանքի հետ անհամատեղելի հրազենային վնասվածքից մահացել է ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող Նարեկ Արմենի Նազարյանը. հայտնել էր ՀՀ ՊՆ-ն:

Դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն: Պաշտպանության նախարարությունը վշտակցում եւ զորակցություն է հայտնում զինծառայողի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ ծառայակից ընկերներին:

Նշենք, որ մահացած զինվորը Լոռու մարզի Գարգառ համայնքից էր: Տան միակ որդին էր, ուներ մեկ քույր: Նարեկ Նազարյանը ընդամենը 19 տարեկան էր եւ 7 ամսվա զինծառայող էր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 79 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՅՏԱՌԱԿ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Իջեւան համայնքի Ներքին Ծաղկավան գյուղի բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթին բողոքել են, որ գյուղի շատ բնակիչներ Ն. Ծաղկավան համայնքի նախկին ղեկավար Իսկանդար Մեհրաբյանի պատճառով հայտնվել են պարտքերի տակ: Գյուղացիների խոսքերով՝ իրենք Ի. Մեհրաբյանի խնդրանքով վարկեր են վեցրել, գումարները տվել Ի. Մեհրաբյանին, սակայն նա չի մարել վարկը, իրենք են հայտնվել վարկերի տակ: Գյուղացիների վկայությամբ՝ վարչական ղեկավարը գյուղում շատերին գումարների պարտքեր ունի: Ծաղկավանցիներն ասացին, որ ցանկացել են վարչական ղեկավարի դեմ բողոքել Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին, սակայն Մեհրաբյանն ասել է, որ Արթուրն իր ընկերն է, բողոքելն օգուտ չի տա: Այդ առթիվ տեղեկատվական հարցում ենք ուղարկել Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին: Համայնքի ղեկավարի պատասխանում նշված է. «Ն. Ծաղկավան բնակավարի վարչական ղեկավար Իսկանդար Մեհրաբյանի հետ գտնվում ենք աշխատանքային հարաբերությունների մեջ, նա իմ ընկերը չէ, Իսկանդար Մեհրաբյանի անձնական խնդիրներից տեղյակ չեմ, եւ դա համայնքի ղեկավարի իրավասությունների եւ պարտականությունների մեջ ներառված չէ»: 2021 թվականին գյուղի վարչական ղեկավար նշանակված Իսկադար Մեհրաբյանը Ն. Ծաղկավանի բազում բնակիչների պարտքերի տակ է գցել, ի՞նչ անձնական խնդիրներ, այդ վիճակը տարիներ շարունակ է, համայնքի ղեկավարը ինչո՞ւ տեղյակ չէ այդ մասին: Արթուր Ճաղարյանը գուցե տեղյակ չէ այն մասին, որ իր կողմից 2021 թվականին Իջեւան համայնքի Լուսահովիտ բնակավայրի վարչական ղեկավար նշանակված, միջնակարգ կրթությամբ Գրիգոր Սարհատյանը անասնագողության համար ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով («Գողությունը, որ կատարվել է խոշոր չափերով») 2016թ. մարտի 5-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանի վճռով դատապարտվել է 2 տարի ժամկետով ազատազրկման, իսկ ապօրինի ծառահատումներ կազմակերպելու համար նույն դատավորի՝ Ռաֆիկ Մելքոնյանի 2020թ. դեկտեմբերի 11-ի վճռով դատապարտվել է 3 տարի ժամկետով ազատազրկման, սակայն դատավորը վճռել է պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով 2 տարի ժամկետով փորձաշրջան:

ՔԱՆԴՎԱԾ ԴԱՐԱՎԱՆԴ

Դիլիջանի ոլորաններում բազմաթիվ տեղեր դարավանդը անօրինական ձեւով քանդել, առեւտրի, սննդի օբյեկտների համար տեղ են բացել: Այդ առթիվ հարցում ենք արել շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին, նախարարությունից պատասխանել են, որ Դիլիջանի ոլորաններում դարավանդը քանդել են ոչ թե Դիլիջանի ազգային պարկի, այլ Դիլիջան համայնքին պատկանող տարածքներում: Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը, ոստիկանության Դիլիջանի բաժինը ցուցաբերել են անգործություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԸ՝ ՍԹՐԵՍԻ ՄԵՋ

«Ավելի քան 30,000 երեխաներ ստիպված են եղել փախչել իրենց տներից երկու շաբաթ առաջ իրենց համայնքներում ռազմական գործողությունների պատճառով». ՅՈՒՆԻՍԵՖ-ը նախազգուշացնում է, որ առանց անհապաղ աջակցության, նրանց հոգեկան առողջությունը կարող է վատթարանալ:



«Հայաստանում ապաստանած փախստական երեխաների մոտ նկատվում են սուր հոգեբանական սթրեսի նշաններ»,- փաստում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ աշխատող սոցիալական աշխատողները, որոնք հատուկ աջակցություն են ցուցաբերում վերջին շաբաթների ընթացքում իրենց տները լքած երեխաներին եւ նրանց ընտանիքներին:

Գորիսում ՅՈՒՆԻՍԵՖ-ի երկու ապահով անկյուններում աշխատող սոցիալական աշխատողները, որոնք օրական սպասարկում են մինչեւ 300 երեխայի, հայտնել են, որ նրանք անհանգստության, վախի եւ զայրույթի զգացումներ ունեն, որոնք դրսեւորվում են մղձավանջներով, գիշերամիզությամբ եւ անսփոփելի լացով: Որոշ երեխաներ մեկուսացել են բոլորից, դարձել են անհաղորդ, անկարող են արտահայտել զգացմունքները կամ ըմբռնել պատահածը:

Ավելի քան 30,000 հայ երեխա է Հայաստան ապաստանել՝ երկու շաբաթ առաջ իրենց համայնքներում սկսած ռազմական գործողություններից ի վեր: Ի լրումն տեղահանության՝ այս երեխաները շարունակաբար բաց են թողել դասերը եւ ապրել են վտանգավոր, ոչ ապահով միջավայրում, եւ ինչպես պատմում են ընտանիքները, նոր հարձակումների վախի պարբերական զգացումով:

«Մենք հիմա տեսնում ենք, թե որքան շատ են տուժել այս երեխաները: Տեղահանումները եւ ռազմական գործողությունները, որոնք զուգորդվել են զրկանքներով, մեծապես ազդել են նրանց ֆիզիկական եւ հոգեկան առողջության, ինչպես նաեւ հոգեբանական բարեկեցության վրա: Երեխաները տարիներ շարունակ կրելու են այս անասելի տխրեցնող իրադարձությունների հետեւանքները, եթե շարունակական աջակցություն չստանան»,- նշել է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը:

«Հոգեկան առողջության համաշխարհային օրվա խորհրդով ՅՈՒՆԻՍԵՖ-ը կոչ է անում համապատասխան ներդրումներ կատարել հոգեկան առողջության եւ երեխաների հոգեսոցիալական աջակցության ուղղությամբ՝ հենվելով առողջապահական, սոցիալական պաշտպանության եւ կրթական համակարգերի վրա: Սա հավասարապես կարեւոր է ոչ միայն վաղ հայտնաբերման եւ անհապաղ աջակցության տեսանկյունից, այլեւ երկարաժամկետ հեռանկարում, քանի որ ընտանիքները շարունակելու են բախվել կորստի զգացմանը եւ հետտրավմատիկ սթրեսի հետ»:

ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է համայնքներում Հայաստանի կառավարության եւ այլ գործընկերների հետ՝ օգնելու փախստական երեխաներին ստանալ անհրաժեշտ խնամք եւ ծառայություններ՝ հաղթահարելու իրենց առջեւ ծառացած մարտահրավերները: ՅՈՒՆԻՍԵՖ-ը վերապատրաստում է առաջնագծում աշխատող մասնագետներին՝ հոգեբանական առաջին օգնություն եւ հոգեսոցիալական աջակցություն ցուցաբերելու համար: Առողջապահության նախարարության հետ միասին ՅՈՒՆԻՍԵՖ-ը ձեւավորել է շարժական մանկաբուժական թիմեր, որոնք հնարավորություն կտան ամբողջ երկրում սկրինինգների միջոցով բացահայտել եւ արձագանքել հոգեկան առողջության կարիքներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը 12,6 միլիոն ԱՄՆ դոլարի հավաքագրման կոչ է անում՝ հետագա վեց ամիսների ընթացքում կարեւոր ծառայությունների, այդ թվում՝ կրթական, երեխաների պաշտպանության, առողջապահական, սնուցման, ինչպես նաեւ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման համար:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Արցախից բռնի տեղահանված ուսանողների կրթության կազմակերպման նպատակով ԿԳՄՍՆ-ն հերթական շրջաբերական գրությունն է ուղարկել ուսումնարանների եւ քոլեջների տնօրեններին:

Համաձայն շրջաբերականի՝ նախարարությունն այս ընթացքում ստացել է մի շարք հարցեր բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության շարունակության կազմակերպման դեպքում իրենց ուսումնառած եւ նախընտրած մասնագիտություններով առարկայական 8 տարբերությունների գերազանցման, ինչպես նաեւ ավագ դպրոց հաճախող կամ հիմնական կրթությունից հետո կրթությունից դուրս մնացած անձանց արհեստագործական ուսումնարան կամ քոլեջ ընդունվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախարարությունը ՄԿՈՒ հաստատությունների տնօրեններին տեղեկացրել է, որ անձի ուսումնառած եւ նախընտրած մասնագիտություններով 8 առարկայական տարբերությունների գերազանցման դեպքում անհրաժեշտ է նախարարության համաձայնությունը ստանալուց հետո հրամանագրել ուսումնառած կուրսից՝ հնարավորության դեպքում կազմակերպելով առարկայական տարբերությունների հանձնումը, կամ անձի (անչափահաս լինելու դեպքում ծնողի) համաձայնությամբ վերականգնել այն կուրսից, որտեղ չի գերազանցի 8 առարկան (մոդուլը): Անձի կողմից հարակից մասնագիտությամբ ուսումը շարունակելու եւ նրա մոտ ակադեմիական տեղեկանք կամ ուսումնառության վերաբերյալ տեղեկատվություն չլինելու դեպքում առարկայական տարբերությունները պետք է հաշվել ՀՀ-ում գործող համապատասխան մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ուսումնական պլաններով:

Ավագ դպրոց հաճախած կամ հիմնական կրթությունից հետո կրթությունից դուրս մնացած անձանց թույլատրվում է կրթությունը շարունակել նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ վճարովի համակարգում, սակայն այդ դեպքում պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում հետագայում չի նախատեսվում:

Ուսանողական իրավունքի վերականգնման մերժման հիմք չի կարող հանդիսանալ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը: Ուսանողի դիմումն ընդունելուց հետո անհրաժեշտ է նրան թույլատրել մասնակցելու ուսումնական գործընթացին եւ հնարավորինս սեղմ ժամկետում դիմել նախարարություն՝ վերականգնման համաձայնություն ստանալու համար:

ԼՂ-ում ընդհատված կրթության իրավունքի վերականգնման դեպքում պետական քոլեջներում եւ ուսումնարաններում կրթության կազմակերպման նպատակով նախատեսվում է պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ճՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԳՆԱՃԻ ՆՎԱԶՈՒՄ

Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) ակնկալում է, որ համաշխարհային գնաճը կնվազի՝ 2022 թվականի 8,7 % առավելակետից 2023 թվականին հասնելով մինչեւ 6,9 %-ի, իսկ 2024 թվականին՝ 5,8 %-ի: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է ՏԱՍՍ գործակալությունը՝ վկայակոչելով համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարների մասին ԱՄՀ զեկույցը:

Ինչպես նշում են զեկույցի հեղինակները, 2024 թվականի համար սպառողական գների աճի կանխատեսումը «վերանայվել է 0,6 տոկոսային կետով դեպի բարձրացումը, ինչն արտացոլում է սպասվածից բարձր հիմնական գնաճը»:

Արժույթի միջազգային հիմնադրամը միեւնույն ժամանակ փոքր-ինչ վատթարացրել է 2024 թվականին համաշխարհային տնտեսության աճի տեմպերի կանխատեսումը:

Սպասվում է, որ 2023 թվականին համաշխարհային ՀՆԱ-ի աճը կկազմի 3 %, իսկ հաջորդ տարի՝ 2,9 %:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ԱՐԺՈՒՅԹԸ

ԱՄՆ դոլարի փոխարժեքը երեկ՝ հոկտեմբերի 10-ին, կազմել է 397.52 դրամ. նախորդ օրվա համեմատ նվազել է 6.58 դրամով: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքից:

Եվրոյի փոխարժեքը կազմել է 420.93 դրամ (նվազել է 4.51 դրամով):

Բրիտանական ֆունտի փոխարժեքը կազմել է 487.12 դրամ (նվազել է 4.67 դրամով), իսկ ռուսական ռուբլու փոխարժեքը կազմել է 3.99 դրամ (մնացել է անփոփոխ):

Հայաստանյան բանկերում դոլարը գնվում է 388-390 դրամով, վաճառվում է 397-400 դրամով:

Եվրոն բանկերում գնվում է 406-411 դրամով, վաճառվում է 420-429 դրամով:

Ռուբլին բանկերում գնվում է 3.64-3.91 դրամով, վաճառվում է 4.99-4.20 դրամով:

Փոխանակման կետերում իրավիճակը հետեւյալն է.

- դոլարը գնվում է 392 դրամով, վաճառվում՝ 397-398 դրամով,
- եվրոն գնվում է 412-415 դրամով, վաճառվում է 422-423 դրամով,
- ռուբլին գնվում է 3.85 դրամով, վաճառվում է 3.98-4.00 դրամով:

Հիշեցնենք, որ օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթը կապ էր հաստատել Կենտրոնական բանկի հետ՝ հասկանալու համար թե ինչի հետ է կապված այս երեւույթը: Ինչո՞ւ է դրամն արժեզրկվում, իսկ եվրոյի, ռուբլու ու դոլարի արժեքը բարձրանում է:

Կենտրոնական բանկից տեղեկացրին, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է արտարժույթի փոխարժեքի ազատ լողացող ռեժիմ, եւ, հետեւաբար, փոխարժեքի փոփոխությունները պայմանավորված են արտարժույթի շուկայում առաջարկի եւ պահանջարկի փոփոխություններով:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ՝ Wildberries-ՈՒՄ

Wildberries առցանց առեւտրի շուկան նախատեսում է գործարկել պատվերի լրացուցիչ հաստատման տարբերակ, որպեսզի հնարավոր լինի խուսափել պատահաբար պատվեր անելուց, ընդ որում՝ այդ տարբերակները կլինեն մի քանիսը. «Ժողովուրդ» օրաթերթին հաղորդում է ընկերության մամուլի ծառայությունը:

«Օնլայն հարթակը մշակում է հավելվածում պատվերի լրացուցիչ հաստատման գործառույթ, որպեսզի նվազագույնի հասցնի այլ սարքերի, ընտանիքի անդամների կամ երրորդ անձանց կողմից պատահական պատվերների հնարավորությունը»,- ասվում է Wildberries-ի տարածած հաղորդագրությունում:

Նոր ֆունկցիան նախատեսվում է գործարկել մեկ ամսվա ընթացքում: Այն հնարավոր կլինի միացնել՝ ըստ ցանկության: Որպես պատվերի լրացուցիչ հաստատման տարբերակ՝ կարող է լինել Pin կոդը, ինչպես նաեւ Touch ID եւ Face ID տեխնոլոգիաները եւ դրանց անալոգները Android-ում:

Ընկերությունը պարզաբանել է, որ պատվերի լրացուցիչ հաստատման ֆունկցիան ավելացնելու որոշումը կայացվել է այն բանից հետո, երբ վերջերս օգտատերերից մեկի երեխան պատահաբար պատվեր էր կատարել:

«Երեխան մոր հավելվածում 250,000 ռուբլու պատվեր էր կատարել: Wildberries-ը, հիմնվելով օգտատերերի վարքագծի վերլուծության վրա, եկել էր այն եզրակացության, որ նրա վերջին պատվերն իսկապես կարող էր կատարված լինել երեխայի կողմից»,- բացատրել է ընկերությունը:

2022-ի մայիսին Wildberries-ը որոշ օգտատերերի տեղեկացրել է, որ 100 ռուբլի կգանձի յուրաքանչյուր պատվիրված ապրանքի համար, որից սպառողն ի վերջո կհրաժարվի: Ընկերության գլխավոր տնօրեն Տատյանա Բակալչուկը պարզաբանել էր, որ վերադարձը վճարովի դարձնելն անհրաժեշտ է, որպեսզի պայքարեն գնումներ անելու թուլություն ունեցողների, այլ ոչ թե սովորական հաճախորդների հետ:

2023-ի ապրիլին Ռոսպոտրեբնադզորի Մոսկվայի մարզային վարչության բողոքի հիման վրա՝ դատարանն անօրինական ճանաչեց թերություն ունեցող ապրանքների վերադարձի համար գնորդներից հավելյալ գումար գանձելու պրակտիկան:

Դատարանը վճռել էր, որ եթե սպառողը Wildberries-ում գնված ապրանքում թերություններ է հայտնաբերում, որոնք չեն հայտարարագրվել վաճառողի կողմից, նա իրավունք ունի պահանջել, որպես դրանք վերացվեն, տվյալ ապրանքը փոխարինվի նույն ապրանքանիշի արտադրանքով, փոխհատուցվեն կորուստները: Սպառողն իրավունք ունի նաեւ հրաժարվել գնումից եւ պահանջել, որպեսզի վերադարձվի ապրանքի համար վճարված գումարը: Ընկերության ներկայացուցիչներն այդ ժամանակ հայտարարել էին, որ դատարանը լիովին չի հասկանում ընկերության քաղաքականությունը, եւ որ թերի ապրանքների վերադարձը «հաճախորդների համար եղել եւ մնում է անվճար»:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Wildberries-ից էժան գնումների սիրահարներին տհաճ անակնկալ է սպասվում:

Ավելի ուշ տնտեսվարողները բողոքի ակցիա էին իրականացրել Կառավարության դիմաց եւ պահանջել ՊԵԿ-ին հնարավորինս արգելել Wildberries-ից էժան պատվիրված ապրանքների վաճառքը, որոնք լուրջ խնդիրներ են առաջ բերում:

Այս ամենին արձագանքել էր Wildberries-ը: Հաղորդագրությունում, մասնավորապես, նշվում է. «Wildberries-ն ուղղել է տեխնիկական սխալը, որի պատճառով ապրանքների կատալոգի մի մասը Հայաստանում վաճառվել է ավելի ցածր գնով: Սխալը շտկվել է կայքում եւ ամենատարածված բջջային օպերացիոն համակարգերում: Աշխատանքները կավարտվեն մոտ ապագայում:

Ընկերության համար կարեւոր է տեղական բիզնեսի կարծիքը, եւ մեր ռազմավարության մեջ մենք միշտ ձգտում ենք հաշվի առնել տեղական համայնքների ցանկությունները եւ բարելավել մեր բիզնես գործընթացները՝ նրանց շահերին համապատասխան»:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՆՔ

«Ժողովուրդ» օրաթերթին Ստեփանակերտի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ Ստեփանակերտում հաշվառված փոխադրամիջոցների սեփականատերերը գույքահարկի պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք կարող են ստանալ աշխատանքային օրերին:

ԼՂ տեղեկատվական շտաբի ֆեյսբուքյան էջում հրապարակվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի հայտարարությունը:

«Հարգելի՛ հայրենակիցներ, Ստեփանակերտ քաղաքում հաշվառված փոխադրամիջոցների սեփականատերերը գույքահարկի պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքներ կարող են ստանալ աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-13:00-ին, հետեւյալ հասցեում՝ ք. Երեւան, Աբովյան 9, 3-րդ հարկ, N310 սենյակ:

Հեռ.՝ 012-37-77-65:

Ծանոթություն. վերոնշյալ տեղեկանքները տրվում են տրանսպորտային միջոցի օտարման կամ տեխնիկական զննություն անցկացնելու համար»,- նշված է հատարարության մեջ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի Հանրապետության ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը խորհրդակցություն է անցկացրել Տավուշի մարզպետարանում:

Նախարարը շնորհակալություն է հայտնել բռնի տեղահանվածներին կացարանով եւ առաջին անհրաժեշտության այլ պարագաներով ապահովելու գործընթացում այս օրերին կատարած աշխատանքի համար:

Նախարարը հանձնարարել է գույքագրել մարզում առկա ազատ բնակարանները, տները, որպեսզի հնարավոր լինի բռնի տեղահանվածներին հյուրանոցներից, հյուրատներից տեղափոխել մշտական բնակության վայրեր:

Նախարարը հանձնարարել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դպրոցահասակ երեխաների հաշվառմանը, որպեսզի երեխաների կրթության իրավունքը չտուժի, եւ նրանք դուրս չմնան կրթական գործընթացից:

Նախարարը հանձնարարել է առանձնացնել հատուկ կարիք, առողջական խնդիրներ ունեցող անձանց, հետեւել, որպեսզի այդ մարդիկ պատշաճ բուժսպասարկում անցնեն:

Նախարարը հանձնարարել է անհրաժեշտության դեպքում ներգրավել նաեւ կամավորների, իսկ բռնի տեղահանվածներին այցելելիս նրանց իրազեկել Կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մասին:

Մարզպետը նախարարին զեկուցել է մարզում կատարված աշխատանքները, տեղեկացրել է, որ մարզում տեղակայվածների մեծ մասը ցանկություն է հայտնել մնալ մարզում, եւ արդեն իսկ սկսել են աշխատանքի տեղավորվել:

Մարզպետը տեղեկացրել է, որ հանձնարարել է գույքագրել մարզում առկա ազատ բնակարաններն ու տները:

Տավուշի մարզում այս պահին տեղակայվել է 3388 բռնի տեղահանված, որոնցից 899-ը՝ հյուրանոցներում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԹԱՐԳՄԱՆՎՈՒՄ ԴՐԱՄԱՆԵՐԸ

«ARMFilm» կայքը հայաստանում առաջին օնլայն հարթակն է, որը ներկայացնում է ոչ միայն մշակույթային, ուսուցողական, տնտեսական եւ համեղ ուտեստներ պատրաստելու մասին հետաքրքիր նյութեր, այլ նաեւ ֆիլմեր ոչ միայն հայկական, այլեւ արտասահմանյան, հիմնականում՝ կորեական:



Իսկ թե ինչպես ծնվեց այս կայքը եւ ինչ նախապատմություն ունի, «Ժողովուրդ» օրաթերթին պատմեց կայքի հնչյունավորող Տաթեւ Սիրունյանը:

«2015 թվականին աշխարհի տարբեր երկրներից մի խումբ հայեր որոշեցին բացել կայքը, որի գլխավոր նպատակը հայալեզու կոնտենտը մեկ կայքում հավաքելն էր: Իմ սիրելի գործընկեր Գագիկ Մեհրաբյանի շնորհիվ իմացա կայքի հայտարարության մասին, կարծեմ, Քովիդի ժամանակ էր, միացա իրենց թիմին ու չէի էլ մտածում, որ ուղղակի սիրողական թարգմանություններ անելը կդառնա իմ մշտական ու սիրելի աշխատանքը:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հասկանալ, թե ինչպես ծնունդ տվեցին այն մտքին, որ պետք է ֆիլմեր թարգմանել, այն էլ՝ կորեական, ինչ վախեր եւ ռիսկեր կար այս գործում: «Ցավալի էր տեսնել, որ տարբեր լեզուներով սիրողական թարգմանությունները այդքան հետաքրքրում էին հայերին, սակայն մենք չունեինք մեր մայրենի՝ հայերեն լեզվով սիրողական թարգմանությամբ զբաղվող կազմակերպություններ կամ կայքեր: Այս պահին մեր նպատակն է հայալեզու սիրողական կրկնօրինակումը դարձնել այնքան սիրված, որ այլ լեզուներով դիտելու ցանկություն պարզապես չառաջանա մարդկանց մոտ: Վախեր չեն եղել երբեք, բայց միշտ գիտակցել ենք՝դժվար ճանապարհ է, պետք է սկսել զրոյից :Փառք Աստծո, տարբեր դժվարությունների միջով անցնելով՝ արդեն ունենք լավ արդյունքներ, իսկ ձեռք բերած մակարդակը շատ բարձր է համարվում սիրողական գործունեության համար», - նշեց նա:

Մասնագիտական ուղղվածությունը Տաթեւին ավելի շատ օգնում է իր գործը արդյունավետ անել: «2 բուհ եմ ավարտել: Առաջին մասնագիտությամբ մշակութաբան եմ, իսկ որպես մագիստրոս՝լրագրող, հաղորդավար: Կրկնօրինակման գործում ինձ շատ են օգնել լրագրողական հմտությունները, խոսքի վարպետությանը ծանոթ լինելը եւ մանկական իմ ամենանվիրական երազանքը՝ դերասանուհի դառնալը: Տարբեր թատերական խմբակներ հաճախելու շնորհիվ՝ ունեմ բազային գիտելիքներ, որոնք իմ նոր գործում ինձ համար դարձան մեծ խթան, եւ թող պաթետիկ չհնչի, բայց աշխատանքում հաջողելու իմ ամենակարեւոր գործոնը մեծ սերն է դեպի ոլորտը. ես հաճույք եմ ստանում իմ աշխատանքից», - նշել է նա:

ՀՀ վաստակավոր արտիստ, դերասան Բաբկեն Չոբանյանը հարցազրույցներից մեկի ժամանակ (հստակ չէր նշել ոչ ոքի) ասել էր, որ ավելի լավ է չանել ոչ մի կրկնօրինակում, անելիս էլ պետք է շատ որակով անել, եւ դերասանի այդ տեսակետին Տաթեւը տեսանյութով արձագանքել էր. խոսեցինք նաեւ այդ թեմայի շուրջ:

«Նախ՝ նշեմ որ շատ մեծագույն հարգանքով ու սիրով եմ մոտենում պարոն Չոբանյանի մասնագիտական վարպետությանը, բայց ինչպես նշեցիք, նա հարցազրույցներից մեկում խոսել էր կրկնօրինակողների մասին, «նկուղային հնչյունավորման» մասին՝ անուններ չտալով: Այո, բայց ոլորտում միայն մենք ենք, ուստի ինձ իրավունք էի վերապահել հանրային կերպով հարց տալ, բայց ես չստացա պատասխան, թե ինչու պետք է կրկնօրինակմամբ զբաղվեն միայն բացառապես դերասանները (դա իր պնդումն էր), երբ, օրինակ, ռուսերեն կրկնօրինակում անում են գործը սիրող ու գեղեցիկ ձայն ունեցող մարդիկ, ովքեր արդեն պրոֆեսիոնալ կրկնօրինակման դերասաններ են, օրինակ՝Պյոտր Գլանցը, Ելենա Սոլովյովան ու շատերը, որոնք զարգացրել են ոլորտը ու մասնագիտությամբ դերասան չեն. հարց է առաջանում՝ ինչո՞ւ ոչ մենք: Մի քիչ էգոցենտրիկ են հնչում մեր ավագ սերնդի պնդումները՝ ըստ իս», - հավելեց նա:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍՈՒՄ Է

Դերասան, շոումեն Ռաֆայել Երանոսյանը փեյբուքյան եւ ինստագրամյան իր էջերում տեւական դադարից հետո հրապարակել է անձնական լուսանկար՝ կից գրելով. «Նայելով օր օրի չարացող աշխարհին՝ հասկանում ես, որ չարի դեմ պայքարի մի ձեւ կա՝ բարությունը՝ բարին հայրենակցի հանդեպ, հարազատի, ընկերոջ, անծանոթի, պարզապես մարդու: Աշխարհին մանկան մաքրություն ու մարդկային բարություն է պետք»:

Նշենք, որ Ռաֆայել Երանոսյանը վերջին շրջանում չեղարկել էր իր շրջագայությունը Հայաստանի տարբեր քաղաքներում՝ պայմանավորված Արցախի ու արցախահայության հետ կապված վերջին դեպքերով, երեկ էլ հայտարարեց՝ ովքեր գնել են տոմսեր, վերադարձնեն, քանի որ դեռ չի կարող ասել՝ իրավիճակով պայմանավորված՝ ինչքան ժամանակով կհետաձգվեն ներկայացումները: Դերասանն իր հանդիսատեսից ներողություն է խնդրել պատճառված անհարմարության համար:

Հավելենք նաեւ, որ Ռաֆայել Երանոսյանը իր կամավորական թիմի հետ միասին հիմք էր դրել Unblock.AM խաղաղ նախաձեռնությանը, որի նպատակն էր Բերձորի՝ Լաչինի միջանցքի բացումը: Կամավորական այս թիմը նաեւ արցախից եկած մեր հայրենիկցներին առաջարկում էին աշխատանքի, կրթության եւ այլ հնարավորություններ:

Հիշեցնենք նաեւ, որ շուրջ մեկ շաբաթ առաջ Ռաֆայել Երանոսյանը ինստագրամյան իր էջում գրել էր, որ բոլորս էլ պետք է վերականգնենք մեր գործունեությունը. «Սիրելի՛ հայրենակիցներ, բնականաբար, բոլորս էլ հասկանում ենք, որ այս բարդ պայմաններում մենք ուշ պետք է վերսկսենք մեր աշխատանքային գործունեությունը: Հաճախ մեր աշխատանքը՝ ստեղծագործական, հումորային, շատ ավելի ակնառու է դառնում ճգնաժամային պայմաններում եւ իրականում շատ ավելի բարդ հենց մեզ համար, քանի որ մեր մտքերն ու նպատակները ուղիղ կապված են երկրում տիրող իրավիճակի հետ: Այս պահին հենց աշխատանքով է, որ պիտի փորձենք մեր առջեւ դրված նպատակները իրականացնել, կարողանալ հնարավորինս օգնել Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին, օգնել ապրել նաեւ մեզ ու մեր ընտանիքներին, փորձել ուղղել այսքան կորացած մեր մեջքը: Մենք հայ ենք, մեր հայրենիքում ենք ու միահամուռ կերպով փորձելու ենք մեր աշխատանքով ու հայրենիքին նվիրվածությամբ հաղթահարել այս ծանր ժամանակները: Ի գո՛րծ»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ԱՆՀԱՋՈՂ ՄԵԿՆԱՐԿ

Հայ բռնցքամարտիկներն անհաջող են մեկնարկել Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում ընթացող Եվրոպայի գավաթի խաղարկությունում:

Հայաստանի ներկայացուցիչներից առաջինը պայքարի մեջ են մտել Արթուր Ղազարյանը (60կգ), Նարեկ Հովհաննիսյանն (63,5 կգ) ու Ջավեն Գալստյանը (71 կգ), որոնք պարտվել են ու ավարտել ելույթները:

Ավելի ուշ ռինգ դուրս եկան Բարեղամ Հարությունյանը (48 կգ), Գուրգեն Մադոյանը (67 կգ), Համբարձում Հակոբյանը (80 կգ), Ռաֆայել Հովհաննիսյանը (86 կգ) եւ Դավիթ Չալոյանը (+92 կգ):

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԶՈՒՄԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նորեկ էդգար Սեւիկյանն առաջին մարզումն է անցկացրել թիմի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին գրում է ՀՖՖ-ն:

Հայաստանի ազգային հավաքականն անցկացրեց հերթական մարզումը ՀՖՖ տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում: Մարզմանը մասնակցեցին 20 ֆուտբոլիստներ:

Նախօրեին հավաքականի հետ առաջին մարզումն անցկացրին էդուարդ Սպերցյանը, Գեորգի Հարությունյանը, Վահան Բիչախչյանը, Տիգրան Բարսեղյանը, Ստյոպա Մկրտչյանը եւ թիմի նորեկ էդգար Սեւիկյանը:

Հոկտեմբերի 10-ին թիմը մեկնել է Ռիգա, որտեղ հոկտեմբերի 12-ին ուժերը կչափի Լատվիայի ընտրանու հետ: Հոկտեմբերի 14-ին մեր թիմը կմեկնի Հյուսիսային Մակեդոնիա: Հոկտեմբերի 17-ին մակեդոնական Ստրումիցա քաղաքի «Բլագոյ Իստատով» մարզադաշտում երկու թիմերն ընկերական հադիպում կանցկացնեն:

ԿԵՐԿԱՐԱՁԳԻ՞ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Պորտուգալիայի հավաքականի 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն ցանկանում է երկարաձգել պայմանագիր Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» հետ մինչեւ 2027 թվական:

Ռոնալդուն ցանկանում է մասնակցել 2026թ. աշխարհի առաջնությանը եւ մեկ տարի անց ավարտել պրոֆեսիոնալ կարիերան:

Ռոնալդուն այս տարվա հունվարին է տեղափոխվել Սաուդյան Արաբիա: Նրա պայմանագիրը «Ալ Նասրի» հետ նախատեսված է մինչեւ 2025 թվականը:

Ընթացիկ մրցաշրջանում Ռոնալդուն «Ալ Նասրի» հետ մասնակցել է 11 հանդիպման, խփել է 11 գոլ, կատարել 6 գոլային փոխանցում:

● *Հոկտեմբերի 12-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չաո» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի օպերատիվ կերպով ստանամ ծանուցումները, տեղեկանամ կիրառված արգելանքների, վարույթների կարճման մասին:

Վազգեն Մանաթյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին իր վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներին, կիրառված բոլոր արգելանքներին կարող է ծանոթանալ՝ գրանցվելով կայքի «Անձնական գրասենյակ» հարթակում՝ մուտքագրելով համապատասխան տվյալները:

Հարթակի միջոցով պարտապան ֆիզիկական անձինք կարող են տեսնել կատարողական վարույթներին առնչվող թարմացումները, տեղեկություն ստանալ ծառայությունում իրենց վերաբերյալ հարուցված կատարողական վարույթների, կիրառված բոլոր արգելանքների, կատարողական վարույթի ընթացքի, կարճման վերաբերյալ, դիտել եւ ներբեռնել 2021 թվականի հունվարի 1-ից հետո հարուցված կատարողական վարույթների շրջանակում կայացված որոշումները, ծանոթանալ կատարողական վարույթի հարուցման հիմք հանդիսացած վարչական ակտերին եւ վարչական մարմնի կողմից այդ ակտերի մասին հասցեատիրոջն իրազեկելուն:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարթակի միջոցով պարտապան ֆիզիկական անձինք կարող են տեսնել նաեւ ակտը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցներին, կատարել վճարումներ միաժամանակ մի քանի կատարողական վարույթով, հետեւել ապաարգելադրման գործընթացին:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն գիտական գործունեության համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

Նարեկ Մնացականյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կազմակերպության ղեկավարը ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով գրավոր դիմում է ՀՀ գիտության կոմիտե՝ ներկայացնելով գիտական միջոցառման կազմակերպչի իրավերը կամ զեկույցն ընդունելու մասին ծանուցումը, գիտական գործունեության համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտը եւ գործունեվող գիտաշխատողի գիտական արդյունավետության բնութագիրը (վերջին 3 տարիների ընթացքում հայտատուի գիտական հրապարակումների (մինչեւ տասը) եւ գիտական միջոցառումներում հրավիրված կամ բանավոր զեկույցների (մինչեւ հինգ) ցանկերը):

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդունելի է նաեւ կոմիտեի մրցույթների հայտերի եւ հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (https://grants.scs.am) գրանցված գործունեվող գիտաշխատողի անհատական (տասներկու նիշանոց) կոդը ներկայացնելը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ՝ հոկտեմբերի 10-ին, տեղի ունեցավ քաղաքապետի ընտրության հարցով Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը:

Երեւանի ավագանու առաջին նիստին ներկա էին ավագանու 37 անդամ:

Նշենք, որ «Հանրային ձայն» կուսակցության անդամները նիստին եկել էին կալանքի տակ գտնվող իրենց անդամների շապիկներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-2 + 2 +10 + 16
Կոտայքի լեռներ	+ 1 + 4 +10 + 13
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 +15 + 17
Գեղարքունիք	+ 2 + 3 +10 + 14
Լոռի	+ 0 + 5 +9 + 13
Տավուշ	+ 3 + 7 +12 + 15
Արագածոտնի լեռներ	+ 1 + 3 +9 + 11
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9 +15 + 19

Արարատ	+ 8 + 10 +19 + 22
Արմավիր	+ 6 + 8 +18 + 20
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 +10 + 12
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 +18 + 21
Սյունիքի հովիտներ	+ 9 + 12 +18 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +11 + 13
ԼՂՀ	+ 9 + 12 +19 + 24
Երեւան	+ 9 + 11 +18 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.10.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*